

բում: նա մի նպատակ, մի պարտք ունի, նա բախտի և արկածներէ խաղալիք չէ: Ով Քրիստոսի սիրոյ բովանդակութիւնը հասկանում է, նա իւր մէջ ձեռք է բերում դրանով արդէն հրեշտակներին ձայնակցելու խելամուտթիւնը. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն»: Նա այս աշխարհի երկրային լոկ ունայնութիւնից վեր է բարձրանում: Այդ անասկ անձիւք սակայն մարդկային ընկերական կեանքի, առաւել լաւ վիճակի կարապետներն են: Նրանց դէպի Աստուած և դէպի մերձաւորն ունեցած սիրուց բղխում է ճշմարիտ քրիստոնէութեան մի այնպիսի հոգի, որ ինչպէս երկարականութիւն մէկից միւսին է անցնում, ծնողներից որդուց մէջ է հոսում, և այնուհետեւ էլ գործելով, մարդկային շատ քաբացած սրտեր փափկացնում է և շատ ուրախ աւետիքներ տալիս: Մենք սովորում ենք հաւատալ ս. Ըննդեանն այն պատճառով, որ աշխարհիս ամենայեալին և ամենաաղքատ որդուց սէրն անգամ անօգուտ չէ խաղաղութիւնը երկրին մօտեցնելու համար: Այս խաղաղութիւնը, դէպի որն իւրաքանչիւր մի կրծքի տակ խորին աննշանք է նիրհած, առանց կռուի ձեռք չի բերւում, և նա չի գալիս միանգամից, բայց չկայ մէկը ոչ երկնքում և ոչ երկրիս վերայ, որ նրան ծառայել չկարողանայ, եթէ միայն ցանկանայ:

Նաումանից թարգմ. Արսակ վարդապետ.

ԱՄՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀԵԱԼԸ

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զմրդին իւր Միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս»: Յովհ. Գ. 16.

Հրեշտակներն եկան Բեթղեհէմի հովիւների մօտ և աւետեցին նրանց. «Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի Գաթի» (Ղուկ. Բ. 11): Այս աւետումով սկիզբը դրուեց փրկութեան ժամանակաշրջանի: Ինչ որ նախնի հայրերի ամենաբարձր ցանկութիւնն ու անն-

չանքն էր, և ինչ որ նրանք մարգարէացել էին, մեծ փառքով կատարուամս ստացաւ: Աստծուն սպասող վախճանուած մարդկանց մեծ յոյսը, սաղմոսներգուի ակնկալութիւնը և Իսրայէլի գարունը պէտք է գար: Այսուհետև Դաւթի գերեզմանն այլ ևս սուգ չպէտք է պահէ և Սիօնն հեթանոսների իշխանութեան տակ այլ ևս չպէտք է մնայ: Ոսկեայ օրեր են ծագում. «Զի Մանուկ ծնաւ մեզ, Որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն իւր եղև ի վերայ ուսոց իւրոց. և անուն կոչեցաւ նմա՝ Հրեշտակ մեծի խորհրդոյ, Սքանչելի, Խորհրդակից, Աստուած չօր, Իշխան, Հայր հանդերձելոյ աշխարհին» (Եսայի Թ. 6): Առէք ձեր տաւիղները լալկան ուռենիների վերայից, նուագեցէք նոր ուրախ եղանակներ, թող հովուական սրինգը դարձեալ ուրախութեան ձայն բարձրացնէ, թող Բեթղեհէմի գաշտերի վերայ երկնային զօրաց ձայնը հնչէ՝ «Փնօք ի բարձունս Աստուծոյ»:

Սակայն Յիսուս իրականութեան մէջ բոլորովին այն չներկայացաւ, ինչ որ հովիւներն էին մտածում: Հին մարգարէութիւնների համաձայն նա Դաւթի քաղաքի տէր չեղաւ իւր իշխանական զօրութեամբ և ծիրանիի փառքով: Հերովդէսի և Պիղատոսի նման առհասարակ նա ոչ մի իշխանութիւն չէր ներկայացնում: Նա Աստուծոյ հոգին էր երկրաւոր պանդխտի զգեստով: Յաւիտանական Աստուածը, որ արևի և տիեզերքի անսահմանութեան մէջ է ապրում, որին հարիւր հազարաւոր տարիներ են պատկանում, որ իւր էութիւնը լեռների բարձանց վերայ և ազգերի պատմութեան մէջ է գծագրել, յայտնել է իրեն նրա՝ իբրև միակ մարդու մէջ: Աստուած ի՞նչպէս է իբրև մարդ գործում: Այդ մենք տեսանք Յիսուսի մէջ: Նրա մէջ անձնաւորեալ կերպով ապրում է աստուածային կատարելութիւնը: Աստուածային ոչ մի յայտնութիւն այնպէս փառաւոր չէ, ինչպէս անձնաւորեալ յայտնութիւնն է: Նա մարդկութեան ծաղիկն է, որովհետև նա մարդկանց աստուածային նպատակի ներկայացումն է: Թէ մարդիկ ի՞նչպէս պէտք է լինէին և պէտք է լինեն, — նրա մէջ է յայտնուել: Փնօք ի բարձունս Աստուծոյ:

Հարիւրաւոր տարիներ են անցել առաջին Սուրբ Երեկոյից յետոյ, սակայն նրա լոյսը չէ մարում, և հրեշտակները չեն դադարում Քրիստոսին փառաբանելուց: Որքան որ մարդիկ կապրեն, որոնք իրենց փրկութիւնը Յիսուսի մէջ կգտնեն, Մնունդն էլ կտօնուի, և այդ տեսակ մարդիկ մինչև վերջին դատաստանի օրն էլ կգտնուեն: Իւրաքանչիւր մի նոր սերնդի մէջ այն հին, մեծ խօսքը դարձեալ կենդանանում է. «Զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն: Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ»: Ծերերն ու մանուկները միասնում են սիրալիր, հաւատով լի ցնծութեան մէջ. «Օրհնութիւն Որդւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ յանուն Տեառն, օրհնութիւն ի բարձունս»: (Մատթ. ԻՍ. 9—10):

Այսօր մեզ համար նմանապէս Մնունդն իբրև շնորհակալութեան օր է հանգիստանում: Բոլոր հոգսերի ու աշխատութեան մէջ մենք մի մեծ մխիթարութիւն ունինք, որ Քրիստոս մեզ համար է ծնուել: Նա աշխարհ եկաւ աղքատ կերպով, որպէս զի մեզ վերայ ևս գթայ: Նա մեր Փրկիչը, մեզ քաւորը դարձաւ: Մեզ համար դրուեց Նա մտերի մէջ և խաչ բարձրացաւ: Ոչ ոք չի կարող ստել, թէ նրա անհասանելի անձնաւորութիւնը սրբան մեծ արժէք ունի մեր հոգու համար: Նա ինքն է կեանքը, նա ճշմարտութիւնն է մարմնի մէջ: Եւ այն բոլորի համար, ինչ որ նա իւր էութեամբը մեզ համար ներկայանում է, ցընծանք այսօր երգելով՝ «Վառք ի բարձունս Աստուծոյ»:

Բեթղեհէմի լոյսը մինչև յաւիտեան չի մարիլ: Եթէ մի այլ աշխարհ կայ, ուր փրկուած հոգիներն ուրախանում են, այնտեղ էլ Յիսուսի ծնունդը սուրբերի փառաբանութեան առարկայ պէտք է լինի: Երկրիս վերայ պատահած բոլոր մեծամեծ դէպքերի մէջ միայն մէկը կմնայ էական. «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր Միածին ետ, զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս»:

Նաուամանից թարգմ. Արտակ վարդապետ.